ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸԱԾՁԲ-(16/4)-9-6»

ք. Երևան «08» «օգոստոս» 2016թ.

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Պետրոսյանի, որը գործում է ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Մահակյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 30 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը չի կարող գերազանցել 1 394 000 (մեկ միլիոն երեք հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամը, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Կատարողի կողմից ծառայությունների մատուցման միավոր գները սահմանված են սույն Պայմանագրի N 1.1 հավելվածում:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրոյ ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևոք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձևոք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

7.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, և N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Վարդանանց 2-րդ նրբանցք, բն. 7
ՀՎՀՀ 02647057	«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
հ/հ 900011006575	հ/հ 1150000327850100
հ/հ 900013202016, հ/հ 900013574018	ՀՎՀՀ 02573651
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի ժ/պ	Տնօրեն՝ Ա. Սահակյան
Գ. Պետրոսյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
կնքված N «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀԾՁԲ-(16/4)-9-6»
ծածկագրով գնման պայմանագրի
«08» «դեկտեմբեր» 2016 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

	անվանումը	Ծառայության մատուցման տեխնիկական բնութագիրը	Ծառայության մատուցման ժամկետները
1	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ	1.Դեզինսեկցիոն ծառայություններ՝ պայքար կենցաղային միջատների և կարիճների դեմ քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: 2.Դեռատիզացիոն ծառայություններ՝ սանիտարական մշակման և համանման ծառայությունների՝ /դեռատիզացիա/ մատուցում: Պայքար կրծողների դեմ մեխանիկական եղանակով /թակարդ, վերշա/ և քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ /բրոմոդիալոն տեսակի կամ համարժեք նյութերով/, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրված են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Ծառայությունը իրականացվում է կից հավելվածում ներկայացվող հասցեներում գտնվող տարածքներում:	պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 25.12.2016թ.

		Կատարողը պարտավորվում է կատարել դեռատիզացիոն և միջատազերծման աշխատանքներ՝ իր բանվորական ուժերով, սարքավորումներով և նյութերով հավելված-1.1 նշված հասցեների տարածքներում:	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների
կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
հ/հ 900011006575
հ/հ 900013202016, հ/հ
900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների
կոմիտեի աշխատակազմի ղեկավարի
ժ/պ
Գ.Պետրոսյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Հակահամաճարակային
արշավախումբ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 2-րդ
նրբանցք, բն. 7
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
հ/հ 1150000327850100
ՀՎՀՀ 02573651
Տնօրեն՝ Ա. Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1.1
N «ՀՀԿԱ-ՊԵԿ- ԲԸԱՀԾՁԲ-(16/4)-9-6»
ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

N/N	ՀՀ ԿԱ ՊԵԿ կենտրոնական մարմնի, հարկային /տարածքային/ տեսչությունների մաքսատների		
	Անվանումները	**Հասցեները**	**Մակերեսը քմ.**
1	ՀՀ ԿԱ ՊԵԿ կենտրոնական մարմին	ք.Երևան, Խորենացի 3, 7 և 7ա	8913,1
2	Կենտրոնի հարկային տեսչություն	ք.Երևան, Դեղատան -3	2628,7
3	Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն	ք.Երևան, Կոմիտաս -35	4440,1
4	Արաբկիրի հարկային տեսչություն		
5	Էրեբունու հարկային տեսչություն	ք.Երևան, Մասունցի Դավթի 87,87ա	1250,3
6	Նոր Նորքի հարկային տեսչություն	ք.Երևան, Մոլդովական 41/3	2343,4
7	Մաշտոցի հարկային տեսչություն	ք.Երևան, Շինարարների 3/1	1661,6
8	Շենգավիթի հարկային տեսչություն	ք.Երևան, Մանթաշյան 55	1242,7
9	Աշտարակի տարածքային հարկային տեսչություն	ք.Աշտարակ, Պռոշյան 29	1441,7
10	Արմավիրի տարածքային հարկային տեսչություն	ք.Էջմիածին, Մաշտոցի 81	634,1
11	Արտաշատի տարածքային հարկային տեսչություն	ք.Արտաշատ, Օգոստոսի 23, փող.-83	712,1/969,1
12	Գավառի տարածքային հարկային տեսչություն	ք.Գավառ, Հերոս քաղաք Նովոռոսիսկի, փ.4	707,5
13	Գյումրու տարածքային հարկային տեսչություն	ք.Գյումրի, Հովսեփյան 1	1008,2
14	Գորիսի տարածքային հարկային տեսչություն	ք.Գորիս, Տաթևացու -9	472,3
15	Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչություն	ք.Եղեգնաձոր, Նարեկացի -8/3	614,2
16	Իջևանի տարածքային հարկային տեսչություն	ք.Իջևան, Մելիքբեկյան -3 ք.Իջևան, Մելիքբեկյան 5/22, 5/28, 5/29	323,0
17	Կապանի տարածքային հարկային տեսչություն	ք.Կապան, Ռ.Մինասյան 20 ա	986,6
18	Կոտայքի տարածքային հարկային տեսչություն	ք.Աբովյան, Բարեկամության հրապարակ 1	952,3
19	Հրազդանի տարածքային հարկային տեսչություն	ք.Հրազդան, Սպանդարյան 24/1	1123,9
20	Սևանի տարածքային հարկային տեսչություն	ք.Սևան, Սայաթ-Նովա 1/1	497,0
21	Վանաձորի տարածքային հարկային տեսչություն	ք.Վանաձոր, Վարդանանց 11	1420,2

22	Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատուն	ք.Երևան, Արշակունյաց 127/21	4581,1
23	Արարատյան տարածաշրջանային մաքսատուն Միջազգային ճանապարհային փոխադրումների տարածաշրջանային մաքսատուն	ք.Երևան, Իսակովի 10	4817,4
24	Ակցիզային հարկով հարկվող ապրանքների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատուն	ք.Երևան, Իսակովի 10, 3-րդ հարկ	355.0
25	Սյունիքի տարածաշրջանային մաքսատուն	Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ Շաբե համայնք	288,1
26	Մեղրիի մաքսային կետ	Կարճևան համայնք	2767,9
27	Գուգարքի տարածաշրջանային մաքսատուն	ք.Վանաձոր,Մոսկովյան 44	985,0
28	Բագրատաշենի մաքսային կետ	Տավուշի մարզ, գ.Բագրատաշեն	518,7
29	Այրում-Ջիլիզայի մաքսային կետ	ք.Այրում, Երկատուղային 20 ք.Ալավերդի, Մադան թաղամաս	450,4 21,3
30	Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ	Գյուղ Գոգավան, գյուղ Պրիվոլնի	110,4/77,3 33,6/25,0
31	Շիրակի տարածաշրջանային մաքսատուն	ք.Գյումրի, Խորենացու 21	436,8, նկուղ 404,9
32	Բավրայի մաքսային կետ	Շիրակի մարզ, գյուղ Բավրա	403,2
33	Ներքին անվտանգության վարչություն	ք.Երևան, Անդրանիկի 37/1	731,6
34	ՆԱՎ Շնագիտական կենտրոն	ք.Երևան, Հյուսիսային փողոց 6	1094,8
35	ՀՀ ԿԱՊԵԿ Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն	ք.Երևան, Ահարոնյան 12/3	1812,4
36	Ավտոնտեսություն	ք.Երևան, Սևանի 104/2	525,3
37	Ուսումնական կենտրոն ՊՈԱԿ-Միկա	ք.Երևան, Մանանդյան 41	3658,9
38	ՀՀ ԿԱՊԵԿ կենտրոնական մարմին	ք.Երևան, Արարատյան 90	5102,4
39	ՀՀ ԿԱՊԵԿ վերադաս մարմին	ք.Դիլիջան, Պարզլճի 5	8102,1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
հ/հ 900011006575
հ/հ 900013202016, հ/հ 900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի

ԿԱՏԱՐՈՂ
«Հակահամաճարակային արշավախումբ» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 2-րդ նրբանցք, բն.7
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
հ/հ 1150000327850100
ՀՎՀՀ 02573651
Տնօրեն Ա.Մահակյան

Հավելված 2
«08» «օգոստոս» 2016
թ. կնքված N «ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀՇՁԲ-(16/4)-9-6»
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2016թ. բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2016 թ. դեկտեմբերի 31-ը	**Ընդամենը Տարի**
1	4213	Ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայություններ									200 350	1 261 130	1 327 910	1 394 000	**1 394 000**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների
կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011006575
Հ/Հ 900013202016, Հ/Հ
900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների
կոմիտեի աշխատակազմի ղեկավարի
ժ/պ
Գ. Պետրոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հակահամաճարակային
արշավախումբ» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 2-րդ
նրբանցք, բն. 7
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150000327850100
ՀՎՀՀ 02573651
Տնօրեն՝ Ա. Սահակյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3.1
«08» «օգոստոս» 2016 թ.
կնքված N «ՀՀԿԱ-ՊԵԿ- ԲՈԱՀՇՁԲ-(16/4)-9-6»
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու)
(Պատվիրատուի անունը)
և ----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. -------ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- --ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Հավելված 3
«08» հոկտեմբեր 2016 թ.
կնքված N «ՀՀԿԱ-ՊԵԿ- ԲԸԱՀՄՁԲ-(16/4)-9-6»
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս
_____ *և*
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, *հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ* «_____» «_____» *20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական գուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ որևէ հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.